ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ

ԳԱԳԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Նա, ով չի նայում դեպի հեռավոր ապագան, ստիպված է մոտակայում անցնելու փորձությունների ու աղետների միջով:
Կոնֆուցիոս

Ժամանակակից աշխարհում բժշկակենսաբանական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման, ինտելեկտուալ բարդ աշխատանքի աննախադեպ ծավալի աճի, արհեստական գլոբալ ինտելեկտի («մարդկության կոլեկտիվ բանականություն») գոյավորման, վիրտուալ պրակտիկաների արագ զարգացման, սակավաշարժության մշակույթի ձևավորման և անհատական ազատության շրջանակների շարունակական ընդլայնման հետևանքով մարդը, աստիճանաբար փոխակերպվելով, թևակոխում է գոյության ու գործառության նոր՝ ավանդականից զգալիորեն տարբեր՝ հետմարդու ժամանակաշրջան: Ըստ էության, համաքաղաքակրթական իմաստով անցումային մի ժամանակաշրջան, որին բնորոշ է անցումը բնականից արհեստականին, արդիականից՝ հետարդիականին, կոլեկտիվներից՝ ինքնավարությանը: Քաղաքակրթությունն աստիճանաբար մոտենում է գայթակղություններով լեցուն, սակայն խիստ վտանգավոր մի եզրագծի, որից անդին չվերահսկվող ուժերի ազդեցությունը մարդու համար կարող է ճակատագրական լինել: Նյութական հզորության սանդուղքով մարդու վերելքն ուղեկցվում է բարոյական արժեքների ոլորտում հուսահատություն պատճառող փոփոխություններով: Մարդկությունն իր գիտատեխնիկական մտքի հաղթանակի, բնության ուժերի վրա իր օրավուր աճող իշխանության հետևանքով կանգնել է ինքնառչնչացման իրական սպառնալիքի առջև: Այժմ բուն կյանքի ապագան կախված է այն բանից, թե մարդն ինչպես կտնօրինի այդ իշխանությունը: Այդ իսկ պատճառով այսօր մարդու՝ որպես անկրկնելի կենսասոցիալական տեսակի գոյության ու շարունակականության, մարդու՝ որպես մարդ մնալու, նրա մարդկային հեռանկարի ապահովման խնդիրները մշակութամարդաբանական իմաստով դառնում են առանցքային նշանակություն ունեցող կենտրոնական հարցեր:

Հնուց անտի հայտնի է, որ մարդը պոտենցիալ առումով կենդանի հակասություն է, նա միաժամանակ և՛ արարիչ է, և՛ ավերիչ: Բոլոր ժամանակներում ինտելեկտուալ միտքը փորձել է մարդկային բնությունն ազատել վատահամբավ, բացասական հատկություններից, սակայն այդ ջանքերը երբեք հաջողությամբ չեն պսակվել: Պատմական լավատեսության ոգով տոգորված փիլիսոփայական ռացիոնալիզմի մարդաբանությունը (մարդը սեփական ինքնակատարելագործմանը միտված բնության լուսապսակն է, նրա շարունակական զարգացումն այլընտրանք չունի) չի ոգեշնչում արդիականության օգտապաշտ ու հաճոյասեր մարդուն: Մադկության ողջ պատմությունը կարծես միտված է ինքնաբացասման, ինքնառչնչացման: 20-րդ դարի ողբերգական փորձը վկայում է, որ պայքարը **Մարդու** և իր մեջ նստած իր իսկ **Հակոտնյայի** միջև մոտենում է իր սահմանային ձևերին, գլոբալ հակասություն է առաջանում մադու արարչական էության և իր արարչության զարմանալի արդյունքների ու սոցիոմշակութային առումով դրամատիկական հետևանքների միջև: Թե այդ պայքարն ինչպես կհանգուցալուծվի, ցույց կտա ապագան: Սակայն կասկածից վեր է, որ այն վտանգված է:

Մարդու կենսասոցիալական և հոգեբանական կայունության պահպանման, մարդաբանական ճգնաժամի հաղթահարման առնչությամբ ժամանակակից փիլիսոփայական մարդաբանության շրջանակներում ուրվագծվում են տրամագծորեն հակադիր երկու մոտեցումներ: Դրանցից առաջինի՝ **մարդաբանական մոդեռնիզմի** համաձայն՝ ժամանակակից պայմաններում, երբ աստիճանաբար սպառվում են մարդու նորմալ գոյության և գործառության համար անհրաժեշտ բնական նախադրյալներն ու պայմանները, երբ օրավուր աճող էկոլոգիական, սոցիալական և հոգեբանական բացասական գործոնների ազդեցությամբ մարդու բնութենական հատկությունները շարունակաբար դեգրադացվում են, մարդու կլոնավորումը, այսինքն՝ նախապես առաջադրված ծրագրով արհեստական պայմաններում մարդու բեղմնավորումն ու աճեցումը, որևէ այլընտրանք չունի: Այս մոտեցման կողմնակիցները հավատացած են, որ տեխնոլորտի շարունակական ընդարձակման պայմաններում կլոնավորումը ոչ միայն մարդու փրկության, այլև անհատական կատարելության և տաղանդի ու ցանկացած հմտությունների ու կարողությունների անարգել զարգացման, իսկ հեռանկարում նաև՝ երկարակեցության և անգամ ֆիզիկական անմահության հասնելու միակ իրական և արդյունավետ ճանապարհն է: Մարդաբանական մոդեռնիզմի կողմնակիցներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են այն փաստարկով, որ կլոնավորման արգելումը կհակասի սեփական կյանքը ազատորեն տնօրինելու մարդու բնական իրավունքին[1]: Ավելին, մարդկային կյանքի բարձրագույն իմաստը «ոչ թե Աստծուն կամ սա-

[1] Տե՛ս **Вишев И. В.** К проблеме моратория на клонирование человека // "Вестник Российского философского общества", 2010, № 2, էջ 155-159:

տանային ծառայելն է», այլ «առավելագույն կատարելության հասնելու ուղղությամբ ինքն իրեն և շրջակա իրականությունը վերափոխելու մարդու անսահմանափակելի կարողությունը»: Համապատասխան հետազոտությունները վկայում են, որ արդի տեխնոլոգիական համակարգերը էապես ազդում են մարդու կենսաբանական որակների վրա և ձևավորում յուրատեսակ տեխնոլոգիական մարդ[2]: Եթե ժամանակի ընթացքում մարդը սովորել է փոխել կամ ստանալ նոր տեսակի բույսեր ու կենդանիներ, ապա այսօր, նկատում է այս տեսակետը ներկայացնող հեղինակներից մեկը, նա մոտեցել է սեփական ինքնավերափոխման (սիլիկոնոպլաստիկա, սեռափոխություն և այլն) և կատարելագործման (արհեստական խթանիչներ, պլաստիկ վիրաբուժություն և այլն), ընդհուպ մինչև այլ տեսակի անցման հնարավորության իրականացմանը: Բացառված չէ, որ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ միջավայրում է գործելու և ինչպիսի գործունեության իրականացմանն են ուղղված լինելու այդ նոր մարդու, ըստ էության հետմարդու, գործառույթները, նրա արտաքին տեսքը և ձևը կարող են և այլ լինել: Անցումը ֆիզիկական, կենսաբանական և սոցիալական այլ հատկանիշներ ունեցող արարածին անշրջելի է, ուստիև՝ որևէ այլընտրանք չունի[3]: Մարդաբանական մոդեռնիզմը ներկայացնող տրանսհումանիստների կարծիքով՝ ժամանակակից մարդն իր նախնիներից զգալիորեն տարբերվող և այն աստիճան վերափոխված էակի հետնորդն է, այն հետնորդը, որն ավանդական իմաստով, ըստ էության, այլևս մարդ չէ: Նրանց համոզմամբ՝ «Homo sapiens»-ի քաղաքակրթությանը հաջորդելու է տեխնոլոգիապես ավելի հզոր և մահկանացու կյանքի փոխարեն անմահ բանականության հասած «nano sapiens»-ի կատարյալ քաղաքակրթությունը: Գլոբալ հումանիտար աղետին հավասարազոր այսպիսի «նանոանցումը» կազդարարի մարդու՝ որպես յուրահատուկ կենսասոցիալական ցեղային տեսակի ավարտը: Ոստի պատահական չէ, որ գիտատեխնիկական անկասելի առաջընթացի անցանկալի հետևանքներից խուսափելու և մարդու՝ որպես յուրահատուկ կենսասոցիալական ցեղային տեսակի պահպանման առնչությամբ մտահոգ բազմաթիվ գիտնականներ, աստվածաբաններ, արվեստի ու մշակույթի գործիչներ այսօր առավել քան կարևորում են բիոէթիկայի զարգացման անհրաժեշտությունը: Բիոէթիկան՝ որպես գործնական ուղղվածության արդիական գիտակարգ, պետք է ներկայացնի բժշկակենսաբանական և տեխնոլոգիական զարգացման այն հստակ սահմանը, որից անդին կվնասվի մարդու կենսակայունությունը, հասարակության մարդկային ապագան: Մարդը մարմնավորված Տիեզերքն է, նրա ընդհանրացված, խտացված արտահայտությունը: Մարդու մասին անտիկ շրջանից

---

[2] Տե՛ս **Гирц К.** Влияние концепции культуры на концепцию человека. Антология исследования культуры. Т. 1. Интерпретация культуры. СПб., 1997, էջ 137:

[3] Տե՛ս **Гончаров В. П.** Геном и клонирование: философский аспект. М., 2002, էջ 92:

սկիզբ առնող այսպիսի պատկերացումը ժամանակակից փիլիսոփայական մարդաբանությունը չի վիճարկում: Կարո՞ղ է արդյոք գենային ինժեներն արհեստական պայմաններում իր ստեղծած թեկուզ ամենակատարյալ արտադրանքի մեջ վերարտադրել ողջ Տիեզերքը, մարդկային ցեղի ողջ պատմությունը, նվաճումներն ու կորուստները, ոգեշնչումներն ու հիասթափությունները, մեղքերն ու տառապանքները, նպատակներն ու իդեալները: Գիտության և տեխնոլոգիաների զարգացման ու շարունակական կատարելագործման պատմությունը վկայում է, որ երբեք և ոչ ոք չի ստեղծել այնպիսի արտադրաք, որի մեջ, թեկուզ պոտենցիալ ձևով, ներկայացված լինեին կեցության ողջ հարստությունն ու բազմազանությունը: Դա անհնարին է. աշխարհը մեր մտքերից ու երազանքներից անսահմանորեն ավելի հարուստ է: Իրական մարդը բազմաչափ է, բովանդակային առումով՝ համապարփակ, արհեստականը՝ միաչափ, ոչ լրիվ, թերարժեք: Արհեստական մարդը ոչ թե Տիեզերքն է ներկայացնում, այլ առավելագույնը ինժեներ-տեխնոլոգի մտավոր նախագիծը, ծրագրավորված, ուստիև կառավարելի թվացող այն իրականությունը, որտեղ դեռևս բավարար չափով չուսումնասիրված հետմարդու վարքը կարող է անվերահսկելի դառնալ: Այս ամենից խուսափելու համար անհրաժեշտ է ստեղծել ոչ ժողովրդավարական թվացող բանական արգելանքների այնպիսի արդյունավետ համակարգ, որի փորձաքննությունը չանցած անգամ ամենագայթակղիչ նորամուծությունները պետք է արգելվեն: Հակառակ դեպքում մարդը որպես մարդ կդադարի գոյություն ունենալուց, դա կազդարարի սիրո և տառապանքի, նվիրվածության և զոհականության, սրբության և իդեալի, ի վերջո՝ մշակույթի վախճանը: Ստեղծագործությունը, մարդուն մարդ պահող ինքնորոնման տառապանքն ու բերկրանքն ավելորդ կդառնան: Ծնունդի և մահվան խորհուրդը՝ որպես մարդկային վերջավոր գոյության իմաստաստեղծ հատկանիշ, կանհետանա: Կեցությունը կզրկվի մարդկային իրական պատմությանն այնքան բնորոշ դրամատիզմից: Մշակույթին կփոխարինի ցանկալի, վաղօրոք որոշված հատկություններով օժտված մարդու (տրանսհումանիստների պատկերացմամբ՝ գերմարդու) արտադրությամբ զբաղվող տեխնոլոգիական համակարգերի ամբողջությունը: Սակայն, տեխնոլոգիան և մշակույթն իրենց բովանդակային հարստության առնչությամբ չեն համընկնում, առաջինը, պարզունակացնելով կեցությունը, այն մանրատում, անդամատում է, երկրորդը, իր բովանդակության բազմաշերտությամբ, պահպանում, վերարտադրում է կեցության ամբողջականությունը: Տեխնոլոգիաների միջոցով «փրկագնել» մարդուն նշանակում է ամբողջական գոյությունը ոգեզրկել, այն բաժանելով մեխանիկական մասնիկների՝ մասնատել, վերածել սոսկ գործառույթներ իրականացնող գերհամակարգի սոսկական մի պտուտակի, համարակալված նանոմիավորի: Բնական է, որ այդ դեպքում կանհետանա այն ա-

մենը, ինչ վերաբերում է մետաֆիզիկականին, անդրանցականին, այսինքն՝ մարդու մեջ ամենամարդկայինին:

Ճգնաժամի հաղթահարման, կենսասոցիալական ու հոգեբանական կայունության պահպանման մասին երկրորդ մոտեցումը **մարդաբանական ավանդապահությունն** է: Ավանդույթը մարդաստեղծ և մարդապահպան կարևոր գործառույթ է կատարում: Ապահումանիզացված ժամանակակից տեխնոկրատական հասարակությունում, հանուն ավանդույթի պահպանման, անհրաժեշտ է պահպանողական հեղափոխություն կատարել[4]: Ըստ այս մոտեցման՝ մարդկային գոյության իրական իմաստի ակունքն ու առանցքը մարդկության պատմության ընթացքում կուտակված և բազմիցս փորձարկված, մարդկային կեցության հարուստ բազմազանությունը ներկայացնող բազմադարյա մշակույթն է: Պատմության քառուղիներում մարդաբանական էնտրոպիայի, այսինքն՝ մարդու մեջ մարդկայինի քայքայման, տարրալուծման դեմ պայքարի արդյունավետ և ամենահուսալի միջոցը համամարդկային հումանիստական մշակույթն է, որը սոցիալական միջավայրի անընդհատ բարենորոգման, հասարակական հարաբերությունների և սոցիալական ինստիտուտների հումանիզացման, սոցիալապես պատասխանատու պետությամբ՝ արդար հասարակություն ձևավորելու միակ երաշխավորն է: Արդիականության քաղաքական, սոցիալական, հոգեբանական տարատեսակ հանգամանքներից բեկված ու աղճատված, պարզունակացված ու ստորացված հուսաբեկ մարդը հումանիտար վերակենդանացման կարիք ունի[5]: Հումանիտար վերակենդանացմանը կարող է նպաստել համամարդկային բարոյական ունիվերսալիաների ոգեղեն ակունքների վրա հիմնված կրթադաստիարակչական համակարգի շարունակական զարգացումը, որտեղ համապատասխան միջավայրի ստեղծմամբ առանցքային նշանակություն պետք է տրվի ստեղծագործական, ըստ էության, ինքնարարչական հմտությունների ու կարողությունների զարգացմանը: «Ոչ թե արդիականությունը, ոչ թե այսօվա «դաժան աշխարհն» են ինձ ձևավորում ու ճնշում, այլ հակառակը. ուժի կամ թուլության, սեփական մտքի և սրտի, գիտակցության խորությամբ կամ մակերեսայնությամբ պայմանավորված՝ ես իմ պատկերով ու նմանողությամբ ձևավորում եմ այն աշխարհը, որում ապրում եմ»[6]: Ստեղծագործությունն ունիվերսալ իմաստով դեռ կյանքի ընթացքում մարդու մեռուկացման, այսինքն՝ սոցիալական և էկզիստենցիալ մահվան համոզիչ այլընտրանքն է: Ստեղծագործությունն իր բնույթով հակաէնտրոպիական նշանակություն ունի, քանի որ այն ինչպես

---

[4] Տե՛ս **Кутирёв В. А.** Бытие или ничто. СПб., 2009, էջ 233-258:

[5] Տե՛ս **Семенов В. С.** О перспективах человека в XXI столетии // "Вопросы философии", 2005, № 9, էջ 26:

[6] **Шиманский А. Г., Шиманская Ю. О.** Человек творческий. К новому мировоззрению. Минск, 2000, с. 229.

մարդու մեջ, այնպես էլ պրակտիկ գործունեության ոլորտում հակադիր է քաոսին, կործանարար միտումներին ու խառնաշփոթին: Բնական է, խոսքը վերաբերում է իրապես մարդկային բովանդակությամբ հագեցած բարոյապես հիմնավորված և սոցիալապես պատասխանատու արարչական և ինքնարարչական գործունեությանը, որը չի վնասում ո՛չ հասարակությանը, ո՛չ էլ շրջակա միջավայրին: Ստեղծագործությունը դիտարկելով որպես աշխարհում մարդուն բնորոշ առանձնահատուկ կեցութաձև՝ այս առնչությամբ ռուս ճանաչված փիլիսոփա Վ. Ա. Կուտիրյովը նկատում է. «Պետք է զգույշ լինել, սատանան էլ է ստեղծագործում»[7]:

Այսօր, երբ homo sapiens-ի «հակաէության» կործանարար պոտենցիալը խնդրահարույց է դարձնում այս աշխահում իր հետագա գոյության հնարավորությունը, մարդն իր ուշադրությունը պետք է բևեռի բուն իսկ կյանքի (ամենալայն իմաստով) պահպանման հիմնարար արժեքկողմնորոշիչների վրա: Մարդը կարող է չհասկանալ նոր ու անծանոթ ուժերի էությունը, կարող է չկանխատեսել դրանց ազդեցության քաղաքակրթական, էկոլոգիական ու մարդաբանական հնարավոր հետևանքները, սակայն նա դատապարտված է վաղ թե ուշ անձամբ հատուցելու իր ընդունած կամ չընդունած ցանկացած որոշման համար: Այս առնչությամբ մարգարեական է 1957 թվականին Նոբելյան մրցանակի արժանանալու կապակցությամբ ֆրանսիացի ականավոր էկզիստենցիալիստ փիլիսոփա Ա. Կամյուի խոսքը. «Յուրաքանչյուր սերունդ հավատացած է, որ աշխարհը վերափոխելու կոչումը հենց իրեն է վերապահված: Սակայն իմ սերունդն արդեն գիտե, որ անկարող է այն վերափոխել: Բայց նրա խնդիրն իրականում գուցե ավելի վեհ է՝ թույլ չտալ, որ աշխարհը կործանվի»[8]: Ուստի անհրաժեշտ է, նկատում է ֆրանսիացի մտածողը, մշակել սոցիալական աղետների ժամանակաշրջանում ապրելու արվեստ, փնտրել և գտնել նոր իմաստներ, որպեսզի վերածնվելով նորից՝ շարունակես ժամանակակից պատմության մեջ գերիշխող մահվան սպառնալից բնազդի դեմ դաժան պայքարը: Ակնհայտ է, որ աշխարհը կործանումից զերծ պահելու համար անհրաժեշտ է էական փոփոխություններ կատարել հենց մարդու մեջ: Այնպես է ստացվել, որ մարդկային գաղտնախորհուրդ կեցության, նրա բնության և էության հինախնդրի լուծումը հաճախ փնտրել են ոչ թե մարդու մեջ, այլ նրանից դուրս (Աստծո, քաղաքական որևէ գաղափարախոսության, սոցիալական կոնկրետ ինստիտուտների, տեխնիկայի կամ բժշկակենսաբանական աշխատակարգերի մեջ), այնինչ այս հարցի լուծումը, վերջին հաշվով, հենց մարդու մեջ է: Տեղին է վկայակոչել Ն. Ա. Բերդյաևի՝ դեռևս 1932 թ. արտահայտած միտքը. «Երբ մարդու

[7] **Кутирёв В. А.** Осторожно, творчество! // "Вопросы философии", 1994, № 7-8, с. 75.
[8] **Камю А.** Бунтующий человек. М., 1990, с. 360.

ձեռքը այդքան ահավոր ուժ է տրված, այդ դեպքում մարդկության ճակատագիրը կախված է մարդու հոգևոր վիճակից»[9]: Փաստորեն, զուտ ռացիոնալ եղանակով հիմնախնդրի լուծման կանխավարկածը միշտ չէ, որ արդյունավետ է: Ինչ խոսք, լուծումը դյուրին չէ, քանի որ այն գտնվում է ոչ թե մարդու ներաշխարհի մակերեսին, այլ խորքերում: Մարդու ռացիոնալիստական հարացույցը (սեփական կատարելությանը հասնելուն միտված բանական և գործունեական արարած) պետք է գոնե իր բովանդակության որոշակի մասի առնչությամբ վերանայվի, ճշգրտվի: Աշխարհը նվաճելու, բնության վրա իշխանություն հաստատելու դիրքորոշմանը պետք է փոխարինի բնության հետ ներդաշնակ ապրելու և ինքն իրենից վեր կանգնելու, հոգևոր իմաստով իր անձը տրոհող թուլություններից ձերբազատվելու դիրքորոշումը: Կկարողանա՞ արդյոք այս «մտածող եղեգնը» (Բ. Պասկալ)՝ բնության մեջ ամենասնապարծ արարածը, տուրք չտալով գայթակղությանը, ինքն իրեն փրկելու համար՝ ինքն իրեն հաղթահարել: Վ.Ա. Կուտիրյովի կարծիքով, ժամանակակից պայմաններում վերահաս վտանգներից ու սպառնալիքներից, համակործան աղետներից մարդուն փրկելու, մարդուն մարդ պահելու համար փիլիսոփայական մարդաբանությունը պետք է «պահպանողական շրջադարձ» կատարի, այսինքն՝ վերադառնա մարդկային դեմքով սոցիալական կեցության պահպանման իր հավերժական խնդիրների նորովի իմաստավորմանը: Այստեղ հատկապես պետք է կարևորվի դեպի կեցության էկզիստենցիալ ոլորտ տեխնոլոգիզմի ներթափանցման և դրա հնարավոր սոցիոմշակութային հետեվանքներին նվիրված հիմնախնդիրների անաչառ և համակողմանի քննարկումը[10]: Պետք չէ մտածել, թե ժամանակակից կյանքի կազմակերպման գլխավոր դերակատարը տեխնիկան է, որքան էլ որ այն կարևոր նշանակություն ունենա, միևնույնն է, որոշիչը ոչ թե տեխնիկան է, այլ սոցիալականության տիպը: Անհրաժեշտ է դիմակայել նաև շուկայական հարաբերությունները որպես հասարակական կյանքի կառուցարկման միակ ունիվերսալ հիմք դիտարկելու սկզբունքին, քանզի շուկայական տիպի հասարակությունում, որտեղ ամեն ինչ գնվում և վաճառվում է, Աստված, ուստիև մարդաստեղծ ու մարդապահպան ամենակարևոր հատկանիշները (հույս, հավատ, սեր) ավելորդ են դառնում: Վ. Ա. Կուտիրյովը կարծում է, որ մարդու փրկության համար այսօր անհրաժեշտ է նաև «բարեփոխել փիլիսոփայական մարդաբանությունը», որի կիզակետում պետք է լինի մարդու կյանքը՝ իր դրսևորման ողջ բազմազանությամբ. մարդաբանությունը (անտրոպոլոգիա) չպետք է դառնա

---

[9] **Бердяев Н. А.** Духовное состояние современного мира. М., 2007, с. 59.

[10] Տե՛ս **Кутирёв В. А.** Апология человеческого (предпосылки и контуры консервативного философствования) // "Вопросы философии", 2003, № 3, էջ 72:

մահաբանություն (թանատոլոգիա). այն պետք է շարունակաբար մերձենա կյանքի մասին գիտությանը՝ էկոլոգիային[11]:

Ժամանակակից մարդու կեցության համընդհանուր ձևի՝ գլոբալիզմի պայմաններում, երբ տեղի են ունենում սոցիալական աննախադեպ, խորքային փոխակերպումներ, սեփական տեսակը պահպանելու համար մարդը պետք է վերադառնա իր գոյության լիակատար ամբողջականությանը, իր իրական հումանիստական էությանը, կենսակայուն զարգացումն ապահովելու համար հետևի ոչ թե ունենալու, այլ լինելու (Է. Ֆրոմ) գաղափարախոսությանը: Մարդու մեջ կան այնպիսի դրական որակներ (այլասիրություն, հերոսականություն, նվիրում և այլն), որոնք զարգացնելով և որոնց վրա հենվելով՝ հնարավոր է կատարելագործել սոցիալական միջավայրը և միջանձնային հարաբերությունները, մարդու հոգեբանական պաշարներն ամրապնդելով՝ օգնել նրան՝ հարմարվելու կեցության նոր իրողություններին ու իրադարձություններին[12]: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել հենց իր իսկ մարդու մասին գիտելիքները, հաշվի առնել իրականացվող տնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ բարեփոխումների մարդաբանական տեսանկյունները, միշտ հիշել, որ կյանքը ո՛չ հանդիսախաղ է և ո՛չ էլ տոն. կյանքը դժվար զբաղմունք է, և նրա միակ չափանիշը պետք է լինի ոչ թե երկարատևությունը կամ հաճոյաշատ օրերի առատությունը, այլ այն, թե ինչպես է այն օգտագործվում: Ի վերջո, արժանավայել ապրած կյանքը պետք է չափել ոչ թե վայելչաշատ տարիներով, այլ արարքներով: Նրանք, ովքեր յուրաքանչյուր արշալույսը դիմավորում են որպես կյանքի սկիզբ, իսկ վերջալույսը՝ ավարտ, և այդ կարճատև կյանքերից յուրաքանչյուրը նշում որևէ բարի արարքով՝ ակնթարթն իսկ հագեցնելով մարդկային խորին բովանդակությամբ, ապրում են լիարժեք, իմաստավորված ու արժանապատիվ կյանքով:

Մարդաբանական ճգնաժամի հաղթահարման համար չբացարձակացնելով հանդերձ ավանդական ռացիոնալիզմի դերակատարությունը՝ չի կարելի ամբողջությամբ անտեսել այդ հարացույցը: Մարդուն ընդունելով որպես բանական էակ՝ ռացիոնալիզմը հենց նրա հետ է կապում մարդաբանական ճգնաժամի առաջացման պատճառների ու դրա հաղթահարման կշռադատված, հետևողական ու սոցիալապես պատասխանատու ուղիների որոնումը: Այս առնչությամբ Հ. Նազարեթյանը ներկայացնում է արդիականության մարտահրավերներին պատասխանելու կարողականության և տեխնիկայի ու տեխնոլոգիաների նկատմամբ քննադատական ու պատասխանատու

---

[11] Տե՛ս **Кутирёв В. А.** Духовность, экономизм и «после»: драма взаимодействия // "Вопросы философии", 2001, № 8, էջ 61:

[12] Տե՛ս **Гуревич П. С.** Антропологическая катастрофа // "Свободная мысль", 1997, № 11, էջ 44:

ռացիոնալ մտածողության առաջանցիկ զարգացմանը միտված «հումանիտար հավասարակշռության» հետաքրքիր գաղափարը[13]: Հայտնի է, որ տարբեր մշակույթներին բնորոշ է ճշմարտության և բարոյականության, նպատակառացիոնալ և արժեքառացիոնալ գործողությունների ինտեգրացիայի առանձնահատուկ տիպ: Արևմտյան մշակութային ավանդույթում էթիկայի հիմքը ռացիոնալ հիմնավորումն է: «Ինչպե՞ս առաքինի ապրել» հարցին Սոկրատեսը պատասխանում էր, որ նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ է առաքինությունը: Այլ կերպ ասած՝ բարոյական վարքի կողմնորոշիչն առաքինության մասին ճշմարիտ գիտելիքն է: Սկզբունքորեն այլ մոտեցում է բնորոշ արևելյան մշակութային ավանդույթին: Այնտեղ ճշմարտությունը չէր առանձնացվում բարոյականությունից, ուստի ճշմարտության հասնելու հիմքն ու նախապայմանը բարոյական կատարելագործումն էր: Հին չինական մշակույթում միևնույն «դաո» հիերոգլիֆը նշանակում էր և՛ օրենք, և՛ ճշմարտություն, և՛ կյանքի բարոյական ուղի: Երբ Կոնֆուցիոսին հարցնում էին՝ ի՞նչ է «դաոն», և ինչպե՞ս ապրել «դաոին» համապատասխան, նա տարբեր մարդկանց տարբեր պատասխաններ կարող էր տալ: Պատասխանը կախված էր նրանից, թե հարց տվողներից յուրաքանչյուրը բարոյական կատարելագործման ինչ ուղի էր անցել: «Ներկայումս գիտության և տեխնոլոգիական գործունեության մեջ,-նկատում է Ստյոպինը,-հաստատվում է ռացիոնալության նոր տիպ, այն իմանենտ ձևով ներառում է արևելյան ավանդական մշակույթներին բնորոշ արժեքների նկատմամբ ռեֆլեքսիան, փոխանդրադարձնում ճշմարտության ու բարոյականության մասին պատկերացումները»[14]: Սակայն, արևմտյան մշակույթում առաջնային դիրք գրավող ռացիոնալության արժեքը սրանով չի նվազեցվում: Այսօր փոխվում է գիտական ռացիոնալության ավանդական տիպը: Ռացիոնալությունը շարունակում է մնալ որպես տարբեր մշակույթների ըմբռնման և երկխոսության անհրաժեշտ միջոց, պարզապես ժամանակակից քաղաքակրթության պայմաններում ռացիոնալության գոյությունը, առավել ևս արդյունավետությունը բազիսային արժեքների նկատմամբ ռեֆլեքսիայից անկախ, անհնար է: Ռացիոնալ ըմբռնումը, ապահովելով բազիսային արժեքների բոլոր «հաշվարկային համակարգերի» իրավահավասարությունը, սոցիոմշակութային լայն ասպարեզ է ստեղծում «մշակութային տարբեր աշխարհների» երկխոսության և խաղաղ գոյակցության համար: Մարդկությունը գլոբալ ճգնաժամերից ելք գտնելու հնարավորություն ունի, բայց դրա համար նա ստիպված է անցնել արժեքների նոր համակարգի մշակ-

---

[13] Տե՛ս **Назаретян А. П.** Смыслообразование как глобальная проблема современности: синергетический взгляд // "Вопросы философии", 2009, № 5, էջ 14-18:

[14] **Степин В. С**. Перелом в цивилизационном развитии. Точки роста новых ценностей // "Глобальное будущее 2045". Конвергентные технологии (НБИКС) и трансгуманистическая эволюция. М., 2013, с. 24-25.

ման և հոգևոր ռեֆորմացիայի դժվարին, բայց շատ կարևոր շրջափուլը:

Այսպիսով, մարդաբանական ավանդապահությունը ներկայացնում է մոդեռնիզմի թերություններն ու բացթողումները, արձանագրում է գիտատեխնիկական ու բժշկակենսաբանական առաջադիմության հարուցած տագնապալի իրավիճակը և ճիշտ գնահատում կատարվող փոխակերպումների սոցիոմշակութային հնարավոր հետևանքները: Այս ամենով հանդերձ, կարծում ենք, որ փիլիսոփայական մարդաբանությունը գլոբալ փոխակերպումների ժամանակակից փուլում, երբ մարդկությունը որպես քաղաքակրթություն հայտնվել է հիմնարար արժեքների տարատեսակությունների ճակատագրական ընտրության առջև, երբ վտանգված են մարդու մարդ մնալու կենսասոցիալական և էկզիստենցիալ հեռանկարները, պետք է ներկայացնի այն գաղափարական առանցքը, որը կարող է դառնալ անվտանգ և կայուն զարգացման հուսալի երաշխավորը: Ժամանակակից հեղինակավոր մտածողների, արվեստի և մշակույթի ճանաչված գործիչների հետազոտություններն ու գնահատականները փաստում են, որ քաղաքակրթական արժանապատիվ ընտրություն կարող է լինել **իրական հումանիզմը**, այսինքն՝ այն գաղափարաբանությունը, որը պետք է մարդու մեջ մարդկայինի պահպանումն ու զարգացումը դիտարկի որպես ընդհանրապես կյանքի պահպանման նախապայման: Անհատական և սոցիալական կյանքի կազմակերպման հենց այդպիսի տեսլականը պետք է դրվի մարդաբանական ճգնաժամի հաղթահարմանն ուղղված տարբեր ծրագրերի ու նախաձեռնությունների հիմքում: Իհարկե, ոմանք կարծում են, որ արդիականության անորոշ ու ռիսկաշատ, ըստ էության աղետալի շրջափուլում հումանիզմը ժամանակավրեպ, «վաղուց իրեն սպառած, սնանկ գաղափար է», ուստի ժամանակակից մերկանտիլ աշխարհում պետք է արժեքային այլ, ավելի պրագմատիկ կողմորոշիչներ փնտրել: Սակայն ժամանակակից գրականության մեջ հումանիզմի գաղափարների քննադատությունը ոչ միայն գերիշխող չէ, այլև հաճախ կենցաղային մակարդակի, ուստիև՝ հուզական ու մակերեսային բնույթ է կրում: Հասարակական կյանքը և մարդկանց ամենօրյա պրակտիկան հատկապես սոցիալական մեծ հեղաբեկումների ու փորձությունների ժամանակ ճիշտ հակառակի մասին են վկայում:

Համադրելով մարդաբանական ճգնաժամը հաղթահարելու, մարդու մարդկային ապագան փրկելու մասին մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումները՝ կարծում ենք, որ իրական հումանիզմի (մարդն այլ մարդկանց համար կարող է լինել միայն նպատակ, այլ ոչ թե միջոց) քաղաքակրթությունը պետք է կառուցարկվի երեք հիմնարար և փոխկապակցված արժեքների հիմքի վրա: Կյանքը դիտարկելով որպես խորին պատկառանքի արժանի բարձրագույն արժեք՝ իրական հումանիզմի քաղաքակրթությունը պետք է ծառայի մարդու իրավունքների

պաշտպանությանը, հնարավոր հակամարտություններում բացառվի բռնության, դաժան, հակամարդկային միջոցների կիրառումը: Արժեքաբանական այդ եռամիասնության բաղադրիչներն են **մարդու կյանքը, մարդկային արժանապատվությունը և ոչ բռնի վարքագիծը**:

Կյանքի իրավունքը բոլոր մյուս իրավունքների ու ազատությունների հիմքն է և բացարձակ արժեք է, քանզի բոլոր իրավունքներն էլ կորցնում են իրենց իմաստը, եթե վտանգվում է մարդու կյանքը: «Կյանքի իրավունք» նշանակում է, որ մարդը կարող է իր ազատ կամքով տնօրինել իր կյանքը և միաժամանակ պաշտպանված լինել իր կյանքի դեմ ցանկացած անօրինական ոտնձգությունից: Կյանքի իրավունքը, լինելով այլ իրավունքների շարքում ամենահիմնականը, նշանակում է նաև, որ այդ իրավունքը ապահովելու և պաշտպանելու համար անհրաժեշտ են մի շարք այլ իրավունքներ, առանց որոնց հնարավոր չէ երաշխավորել կյանքի իրավունքը: Ըստ էության, ցանկացած այլ իրավունք միջնորդավորված ձևով նպաստում է կյանքի իրավունքի ապահովմանը, և դրանց ամբողջությունն է միայն երաշխավորում կյանքի իրավունքի իրականացումը: Ուստի միանշանակ է, որ պետությունը և հասարակությունը, մարդկային կյանքն ընդունելով որպես բարձրագույն արժեք, բոլոր հնարավոր միջոցներով պետք է պայմաններ ստեղծեն մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար:

Մարդու իրավունքների և ազատությունների համախումբը (կյանքի իրավունք, ազատության և անձեռնմխելիության իրավունք, ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք, մտքի և խղճի ազատության իրավունք) անկատար, ուստի և թերի կլիներ, եթե այն չամբողջարկվեր բանական ու բարոյական արարածին այնքան վայել՝ արժանապատվության իրավունքով: «Արժանապատվություն» բառը նշանակում է այն, «ինչը արժանի է հարգանքի ու պատվի, և այն, ինչը մեծ նշանակություն ու արժեք ունի»: Այդ բառի մեջ համադրված են երկու իմաստներ: Առաջին՝ այն նշանակում է, որ ցանկացած սուբյեկտ արժեք ունի: Երկրորդ՝ արժանապատվությունը նշանակում է սուբյեկտի կյանքի համապատասխանություն այդ արժեքին: Քրիստոնեական պատկերացումների համաձայն՝ արժանապատվությունը մարդուն Աստծո շնորհած Աստծո հատկությունների ամբողջությունն է, որովհետև, ինչպես հայտնի է, Աստված մարդուն ստեղծել է իր պատկերով և նմանությամբ, իսկ մարդու իրավունքները բխում են նրա արժանապատվությունից: Այստեղից հետևում է, որ բնական իրավունքի հիմքում ամենաառաջինն արժանապատվությունն է, և եթե պաշտպանված է մարդու արժանապատվությունը, ապա նրա մյուս բոլոր իրավունքներն ինքնին պաշտպանված կլինեն[15]: Մարդու արժանապատվության

[15] Այդ մասին մանրամասն տե՛ս **Ռ. Պապայան**, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Էջմիածին, 2002, էջ 233-240:

նկատմամբ նման դիրքորոշումը վկայում է, որ այն հասարակությունը դիտում է իբրև սոցիալական բարձրագույն արժեք, և միաժամանակ ճանաչվում են յուրաքանչյուր կոնկրետ անձի անհատականությունն ու եզակիությունը: Այսպիսի ըմբռնումը յուրաքանչյուրին պարտադրում է նաև հարգել ցանկացած մարդու արժանապատվությունը՝ անկախ այն բանից՝ այդ մարդը չափահաս է, թե անչափահաս, հոգեկան հիվանդ է, թե առողջ, կրթված է, թե ոչ: Բացի այդ, մարդու արժանապատվությունը հարգելը նշանակում է նաև, որ չի թույլատրվում հոգեֆիզիկական ճնշում գործադրել մարդկանց վրա, չի թույլատրվում խոշտանգել նրանց և առհասարակ՝ գործադրել նրանց արժանապատվությունը նվաստացնող միջոցներ կամ առանց նրանց համաձայնության ենթարկել բժշկական կամ գիտական փորձերի[16]: Ուստի պատահական չէ, որ մարդու իրավունքների ժամանակակից հայեցակարգի կենտրոնական հասկացությունը մարդկային արժանապատվությունն է: Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ հռչակված սկզբունքներին համապատասխան՝ մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումն ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է, և այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից: Արժանապատվությունը՝ «որպես մարդու կոչումը բնութագրող ներքին արժեք»[17], ինչպես նկատում է մեր ժամանակների մեծ փիլիսոփա և քաղաքագետ Յուրգեն Հաբերմասը, «մարդկային բոլոր իրավունքներն ու ազատությունները սնուցանող իրավունքների բարոյական ակունքն է»[18]: Մարդու արժանապատվության կոնցեպտը քաղաքացիների՝ որպես միմյանց իրավահավասար սուբյեկտ ընդունող կենսադիրքորոշման հիմքն է, հետևաբար հենց նրա մեջ են գտնվում անհատների, մարդկային տարբեր հանրույթների և երկրների փոխհարաբերությունների ոչ բռնի՝ որպես որևէ բացառություն չընդունող էթիկական բարձրագույն սկզբունքի կամ օրենքի բարոյահիրավական հիմքերը, որոնք կարող են և՛ պետք է լինեն մարդու՝ որպես ցեղային տեսակի հետագա գոյության և կայուն զարգացման հուսալի երաշխավորը[19]: Մարդու արժանապատվությունը բացարձակ է, և պետությունը պարտավոր է այն պաշտպանել ամեն տեսակի ոտնձգություններից, որտեղից էլ որ դրանք բխեն:

Եվ այսու, հիմնարար արժեքների վերոնշյալ եռամիասնությունը նոոսֆերայի (բնության և հասարակության փոխազդեցության ոլորտ և

---

[16] Տե՛ս **Վ. Վ. Պողոսյան,** Մարդու իրավունքներ. նախագիտելիք, Եր., 2012, էջ 65-66:

[17] **Апресян Р. Г.** Достоинство // Новая философская энциклопедия. М., 2000, т. 1, с. 694-695.

[18] **Хабермас Ю.** Концепт человеческого достоинства и реалистическая утопия прав человека. М., 20013, с. 15-17.

[19] Տե՛ս **Гусейнов А. А.** Ненасилие // Новая философская энциклипедия. М., 2001, т. 3:

զարգացման փուլ, երբ բանականությունը դառնում է հասարակական զարգացման վերափոխիչ և վճռորոշ գործոն) արժեքաբանական այն նուրբ շերտն է, որը մարդկությանը կարող է փրկել նախաքաղաքակրթական վայրենության ժամանակաշրջանին բնորոշ իմպուլսիվ ամենաթողության կործանարար ազդեցությունից: Քաղաքակրթության նոոսֆերայում սոցիոմշակութային այդ շերտի խոցելիության աճը կարող է հանգեցնել մարդկության հետագա գոյության և գործառության համար խիստ վտանգավոր արժեքաբանական խոռոչների առաջացմանը: Մի՞թե մարդկությունը, տուրք տալով իշխանության ու փողի գայթակղություններին և անխոհեմ մոլորություններին, պատրաստվում է ֆաուստյան ճակատագրական գործարքին: «Ներկայումս,-իրավացիորեն նկատում է Ա. Հուսեյնովը,- մարդկությունը չունի որևէ միավորող գաղափար, բարոյական ընդհանուր հորիզոն: Ոչ բռնությունն այն նոր հոգևոր-գործունեական բարձունքն է, որը մարդկությունը պետք է նվաճի: Դա անհրաժեշտ է իր փրկության և քաղաքակրթության նվաճումների պահպանման համար: Սա որևէ այլընտրանք չունի»[20]: Սա անվիճարկելի իրողություն է: Անտարակույս, եթե հումանիստական վերընթացի ուղղությամբ քաղաքակրթության էվոլյուցիան կողմնորոշող առաջարկված եռամիասնությունը կամ հիմնարար արժեքների որևէ այլ հնարավոր համադրությունն աշխարհաքաղաքակրթական կենտրոնների և պետությունների ու դրանց քաղաքացիների մեծամասնության կողմից աջակցություն չգտնի, ապա, բնականաբար, կաճի հոռետեսական սցենարների, ընդհուպ մարդկության ապագան վտանգող ամենաթողության աղետալի հաղթարշավի հավանականությունը: Այս իսկ պատճառով մարդու և քաղաքակրթության պահպանման ու կայուն զարգացման իմպերատիվ արժեքներ պետք է դառնան իրական հումանիզմի առանցքը կազմող (**մարդու կյանք, մարդկային արժանապատվություն և ոչ բռնի վարքագիծ**) հիմնարար արժեքները: Դա կօգնի կործանումից փրկելու անգամ այն մարդկանց, որոնց համար գերակա նշանակություն ունեն միայն օգտապաշտական արժեքները[21]: Անձնական և հասարակական կյանքում վճռորոշ դերակատարում պետք է ունենա բարոյական սկիզբը, այն պետք է դառնա կատեգորիկ իմպերատիվ, ուստի հարկավոր է միջազգային հարաբերությունները կառուցել և գիտատեխնիկական առաջընթացն իրականացնել ղեկավարվելով հենց այդ հրամայականով: Մարդկային պատմության քառուղիներում ծագող խնդիրները լուծելիս ամենաառաջնայինը պետք է լինեն համամարդկային բարոյական արժեքները:

Ժամանակակից տարատեսակ մարտահրավերներին դիմակայելու, կայուն ու մարդու մարդկային առաջընթացն ապահովելու և պար-

---

[20] **Гусейнов А. А.** Сегодня в мире нет общих моральных идей… // http: // baturin. Viperson.ru/wind.php?ID=482876@soch=1.

[21] Տե՛ս **Уайтхед А.** Избранные работы по философии. М., 1990, էջ 560:

բերական (այդ թվում և մարդաբանական) ճգնաժամերը հաղթահարելու համար պատմության այս շրջադարձային աննախադեպ փուլում, երբ թվում է, թե խաթարվել է կեցության ներդաշնակությունը, և օդում սավառնում է մարդու մարդ մնալու, ըստ էության, որպես այդպիսին գոյության և չգոյության սպառնալիքը, քաղաքակրթությունը հումանիստական արդիականացման ծայրահեղ կարիք ունի: Նկատենք, որ ներկայումս միայն կարելի է խոսել այդպիսի արդիականացմանը նախապատրաստվելու սոսկ ցանկության մասին: Այս վճռորոշ պահին դրա նախապատրաստման աշխատանքներին մասնակցելը կամ չմասնակցելն այն իրական **քաղաքակրթական ընտրությունն** է, որը կարող է և պետք է կատարի ցանկացած ոք: Մարդու ազատ և պատասխանատու ինքնորոշման կարողությունն իր հետագա գոյության գլխավոր նախապայմանն է: Ստեղծագործ գիտակցությունը պոտենցիալ առումով օժտված է ցանկացած բացասական իրավիճակի հաղթահարման կարողությամբ և իրականության յուրացման անսահմանափակ հնարավորություններով: Օրգանական կյանքի գոյության համար անհրաժեշտ միջավայրի առկայության դեպքում ինքն իրեն հաղթահարելու, ինքն իրենից վեր կանգնելու և հոգևոր-մշակութային կյանք վարելու միայն իրեն բնորոշ ներունակությունը մարդու և մարդկային ապագայի գրավականն ու միակ հուսալի երաշխավորն է:

Անորոշ ու անկանխատեսելի ժամանակակից աշխարհում մարդաբանական ճգնաժամի հաղթահարման և գոյատևման շարունակականությունն ապահովելու խնդիրների հետ սերտորեն կապվում է նաև **կյանքի իմաստի** հիմնահարցը: Ավանդաբար կյանքի իմաստն ընկալվել է որպես մարդու գոյության էկզիստենցիալ առանցք, սոցիալական կենսագործունեության բովանդակությունը պայմանավորող և ուղղորդող արժեքային կողմնորոշիչ: Կյանքի իմաստի հարցը այս աշխարհում մարդու գոյության հիմնական ռազմավարության ընտրության և դրան համապատասխան գործելու հարցն է: Արժեքաիմաստային համակարգն անձի արժեքային կողմնորոշիչների այն համախումբն է, որն արտահայտում է նրա ներքին, հոգևոր կառուցվածքին բնորոշ, կենսիմաստային առումով նշանակալի հատկանիշների ամբողջությունը: Արժեքային այդ կողմնորոշիչները գիտակցության և վարքի անմիջական դրդապատճառներ են և հանդես են գալիս որպես անձի գործառության և զարգացման կարգավորիչներ, սոցիալական նորմերի ու կանոնների յուրահատուկ չափորոշիչներ, որոնց յուրացմանը զուգընթաց տեղի է ունենում անհատի սոցիալականացումը: Նկատենք նաև, որ արժեքաիմաստային կողմնորոշիչները ձևավորվում և գործառում են՝ ելնելով տվյալ հասարակության սոցիոմշակութային ազգային հիմունքների կոնկրետ-պատմական առանձնահատկություններից: Պատահական չէ, որ տարբեր հասարակություններ իրենց պատմական զարգացման տարբեր փուլերում բարձրագույն արժեքների տարբեր

աստիճանակարգեր են ներկայացնում: Շուկայական հասարակությունը, որպես կանոն, բուրգի գագաթին տեղադրում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են մասնավոր սեփականությունը, անձնական բարեկեցությունը, մարդու իրավունքներն ու ազատությունները և այլն: Իսկ ավանդական հասարակությունն իր անդամներին առաջարկում է արժեքների համակարգում գերակայելի համարել իմաստաարժեքային հանրային կողմնորոշիչները (փոխօգնություն, սոցիալական պաշտպանվածություն, հանուն ընդհանուր նպատակների և իդեալների զոհաբերման պատրաստակամություն և այլն): Ընդհանուր վտանգի առջև հայտնված ցանկացած սոցիում, սակայն, կարևորում է համահասարակական արժեքները, հակառակ դեպքում հասարակությունը կդատապարտվի կործանման: Այսուհանդերձ, նկատենք նաև, որ արժեքաիմաստային կողմնորոշիչներից յուրաքանչյուրը ցանկացած մարդ յուրովի է ընկալում ու վերամեկնաբանում՝ դրանց հաղորդելով զուտ անձնային, երբեմն՝ պարագայական իմաստ: Անձնայինը ձևավորվում է անհատականության և սոցիալական հանգամանքների էկզիստենցիալ միջակայքում: Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ որևէ սոցիոմշակութային համակարգի սահմանած բարձրագույն արժեքներն ամեն ոք ընկալում է յուրովի և սեփական արժեհամակարգում դրանք յուրովի դասակարգում: Հասարակությունը կարող է զոհողություն և ինքնազսպում քարոզել, մինչդեռ անձը կարող է իր համար առաջնային համարել հարստանալը կամ ստեղծագործելը, և հակառակը՝ այն հասարակության մեջ, որտեղ առաջնային են համարվում հաջողությունն ու հարստությունը, միշտ էլ կգտնվեն մարդիկ, որոնք ավելի բարձր դասեն համահասարակական, կոլեկտիվ արժեքները: Ավելին՝ կյանքի ընթացքում արժեքների աստիճանակարգում միևնույն արժեքի տեղն ու նշանակությունը կարող է պարբերաբար փոխվել: Այսպես՝ երիտասարդության տարիներին մարդը կարող է առաջնային համարել ընկերության, սիրո և վայելքի արժեքները, հասուն տարիներին՝ աշխատանքային առաջընթացի և բարեկեցության խնդիրները, իսկ առաջացած տարիքում՝ հավանական է, որ նրա համար ընտանիքից կամ կրոնական հավատից բարձր որևէ արժեք գոյություն չունենա: Ի դեպ, կյանքը ոչ միշտ է, որ արժեքների աստիճանակարգում գրավում է ամենաբարձր տեղը: Մարդիկ երբեմն գիտակցաբար զոհաբերում են կյանքը հանուն հայրենիքի, ճշմարտության, կրոնական կամ քաղաքական իդեալների:

Սկզբունքային այլ իրավիճակ է ձևավորվում այն ժամանակ, երբ մարդ կորցնում է կենսիմաստային այն արժեքները, որոնք անհրաժեշտ են իրեն՝ շրջապատող աշխարհը համարժեք ըմբռնելու և ինքնաբավ կյանքով ապրելու համար: Զրկվելով սոցիալական կեցության, ընդհանրապես գոյության այդ գլխավոր արժեքային հիմունքներից՝ մարդը կարծես կորցնում է և՛ ինքն իրեն, և՛ իր տեղը «արժեզրկված»

կյանքում, անհետանում է կեցության անձնային իմաստը, մարդն ապրելու փոխարեն գոյատևում է: Ցավագին այս փոխակերպումներն ուղեկցվում են տառապանքով, սոցիալական դրամայի գլխավոր հերոս է դառնում «Homo patins»-ը (տառապող մարդը)[22]: Էկզիստենցիալ մահվանը[23] հավասարազոր հոգևոր անզգայացման դեպքում, մշտապես ճնշելով իրապես նշանակալի հուզական ազդակները միայն այն բանի համար, որ դրանք կարող են առաջացնել բացասական ապրումներ, մարդը սպանում է իր ներքին կյանքը: Ցավը և տառապանքը, նկատում է Վ. Ֆրանկլը, ինչպես ճակատագիրն ու մահը, կյանքի կարևոր բաղադրատարրերն են, ուստի դրանցից ոչ մեկը չի կարելի կյանքից կտրել՝ չկործանելով նրա իմաստը: Բոլոր այն մարդիկ, ովքեր չեն կորցրել «ըմբռնման էկզիստենցիալը», ի վիճակի են առանց բարդույթների հաղթահարելու արժեքաիմաստային ճգնաժամերը՝ հստակ գիտակցելով, որ՝

- մարդկային կյանքն իմաստազուրկ չի կարող լինել,
- կյանքի իմաստի որոնումը մարդկային էության նորմալ հատկություն է և ոչ թե նյարդային հիվանդություն,
- պետք է օգնել, որ «էկզիստենցիալ վակուումում» հայտնված մարդը գտնի իմաստաարժեքային նոր համակարգ. իմաստը գտնվում է և ոչ ստեղծվում:

«Արժեզրկված» կյանքում կենսիմաստային ճգնաժամերի հաղթահարման ռազմավարությունը ստեղծագործական բարդ գործընթաց է, ինչը նաև մարդու ներաշխարհի խախտված ամբողջականության փնտրտուք է: Ինքնին այդ որոնման մեջ որևէ ապահովագրված երաշխիք չկա, բայց եթե մարդը ողջ է և ունակ ապրելու, առավել ևս ուրախանալու, ապա հնարավոր է, որ նա գտել է իրականության հետ ներդաշնակությունը վերականգնելու իր միակ ուղին:

Այս կարևոր դիտարկումներից հետո անդրադառնանք խնդրո առարկային: Եւ այսու, ի՞նչը պետք է լինի գոյության և չգոյության սահմանագծին հասած, ժամանակակից տեխնոլոգիական դարաշրջանում ապրող մարդու կյանքի իմաստը:

Հայտնի է, որ կյանքի իմաստը ոչ միշտ է մարդու կողմից ռացիոնալ ձևակերպվում և ըմբռնվում: Այն բարդ սոցիոմշակութային իրողություն է, հուզաարժեքային երևույթ, որն ավելի շատ ապրվում է, քան գիտակցվում: Ուստի պատահական չէ, որ փիլիսոփայական մտքի պատմության մեջ չի եղել (և ըստ երևույթին չի կարող լինել) այս շատ կարևոր հարցի միանշանակ ու համընդունելի լուծման պատասխան: Այնուամենայնիվ, կարելի է տարբերակել սկզբունքային երեք դիրքորոշում:

- Մարդը բնության սխալի արդյունք է, այդ իսկ պատճառով նրա

---

[22] Տե՛ս **Франкл В.** Человек в поисках смысла. М., 1990, էջ 101:

[23] Տե՛ս նույն տեղը, էջ 227-229:

կյանքը մտել է փակուղի: Այս ուղղության շրջանակներում կենսիմաստի հարցը սկզբունքորեն չի կարող լուծվել, քանի որ կեցությունն ինքնին անիմաստ է (էկզիստենցիալիզմ):

● Մարդն այս աշխարհում չի կարող լուծել սեփական գոյության, իր իսկ կյանքի իմաստի հարցը, ուստի, հավատալով հոգու անմահության գաղափարին, պետք է կողմնորոշվի դեպի այնկողմնային աշխարհ, ապավինի իրենից վեր գտնվող ուժերին (աստվածաբանություն, կրոնական փիլիսոփայություն):

● Առանձին մարդու կյանքն իմաստ է ձեռք բերում այն ժամանակ, երբ նա իր վերջավոր գոյությունը հարաբերակցում է մարդկության ավելի տևական գոյության հետ, երբ տագնապում, անհանգստանում է իր հետնորդների (ինչու չէ, նաև ողջ մարդկության) ապագայի համար (իրատեսություն):

Մարդու կյանքի իմաստի ըմբռնման ժամանակ կարևոր նշանակություն ունեն նրա կեցության կոնկրետ-պատմական և սոցիոմշակութային լայն համատեքստի հաշվառումը և կոնկրետ անձի աշխարհայացքային ընդհանուր դիրքորոշումը: Ըստ այդմ՝ կարելի է առանձնացնել կենսիմաստային հարցերի առաջադրման և լուծման ըստ էության միմյանց հակադիր երկու մոդել:

Կյանքն իր համար (եսասիրական կողմնորոշում): Իր հիմքում բնական աշխարհայացքային մոդել, որը, բնականաբար որոշակի տարբերություններով ու դրսևորման առանձնահատկություններով հանդերձ, բնորոշ է շատերին և պայմանավորված է կյանքի պահպանման բնազդով:

Կյանքն ուրիշների համար (այլասիրական կողմնորոշում): Մարդկային բնությանը հարազատ և հիմնականում մարդու սոցիոմշակութային որակներով պայմանավորված աշխարհայացքային մոդել:

Ինչպես ինտելեկտուալ մտքում, այնպես էլ մարդկանց առօրյա գիտակցության մեջ, որպես մարդու կենսակերպը պայմանավորող և ուղղորդող առանցքային արժեքային կողմնորոշիչներ, այս երկու մոդելներն էլ ներկայացված են: Սրանցից յուրաքանչյուրը համապատասխան, անբեկանելի թվացող փաստարկներով փորձում է ապացուցել իր ճշմարտացիությունն ու արդյունավետությունը: Իսկ ինչո՞ւ չփորձել միավորել այս հակադիր մոտեցումները, չէ՞ որ, ինչպես ընդունված է ասել, ճշմարտությունը գտնվում է սրանց «միջակայքում», այսինքն՝ երկխոսության (կամ՝ անգամ մրցակցության) տարածքում: Ինչո՞ւ որպես հիմնական կենսիմաստային կողմնորոշիչ չընդունել կյանքն ընդհանրապես (իր ամենալայն նշանակությամբ՝ որպես հիմնարար արժեքային կողմնորոշիչ): Ի վերջո, ապրել բոլորն են ուզում՝ և՛ եսասերները, և՛ այլասերները, և՛ երիտասարդները, և՛ ծերերը, և՛ ունևորները, և՛ չունևորները, և՛ հավատացյալները, և՛ անհավատները: Համոզված ենք, որ հենց կյանքը կարող է դիտարկվել որպես մարդկային կեցության

բացարձակ, համընդգրկուն իմաստ-կողմնորոշիչ և, որպես այդպիսին, պոտենցիալ առումով պարունակում է իմաստաարժեքային մնացյալ բոլոր հանգամանքները: Մարդու կյանքի իմաստը, դրսևորման ողջ բազմազանությամբ հանդերձ, ինքնին հենց կյանքի հաստատումն է, այն կյանքի, որը տրված է բոլորին, այն թե՛ իմն է, թե՛ ուրիշներինը: Այս կարևոր, կենսահաստատ գաղափարի գիտակցումը մարդու և մարդկային հասարակության գոյության միակ գրավականն է: «…Մենք այդպես էլ չկարողացանք,-նկատում է Էդ. Հարությունյանը,-սերտորեն ու սրտաբաց դաշնակցել մեր իսկ ճարտարակերտած աշխահի հետ: Աշխարհին այս խելակորույս սլացքն ինքներս ենք հաղորդել և գլխապտույտից սրտնեղած՝ փորձում ենք սանձել անսանձելին: Մեր ամբողջ պատմությունը պայքարելով հնազանդվելու, կենսական բիրտության և կենսաբանական հոգոցների արանքում էկզիստենցիալ տագնապների, պիտանի և վաստակած օրերը անպիտան և ավարա օրերով փոխարինելու շղթա է: Մի բան ակնհայտ է, որ մարդու բնական և սոցիալական վիճակների միջև հսկայական խզվածություն կա, և հավանաբար այդ երկու անկշտում գիշատիչներին տանելի հաշտեցման կարող է դրդել միայն **գոյատևման մտահոգությունը՝** մարդկային մարմնականությանը բնորոշ ապրելու բնազդը»[24]: Բայց սա չի նշանակում, որ կյանքը դատապարտված ու ճարահատ ընտրության ապրելաշրջան է, ճիշտ հակառակը՝ այն խորին ակնածանքի արժանի բարձրագույն պարգև է, էութենական, ստեղծագործ ուժերի դրսևորման և ինքնիրացման արարչական ասպարեզ: Եվ որպես այդպիսին՝ Մարդը (մարդկությունը) հետագա պատմություն ունենալու իրավունք ունի: Այսինքն՝ կյանքն իմաստ և արժեք է ձեռք բերում լոկ այն ժամանակ, երբ այն նպատակամղված է դեպի ապագան: Առանց ապագայի մարդկային կյանքը կորցնում է իր իմաստն ու նշանակությունը: Ուստի կյանքի համար պայքարը, ըստ էության, նաև չգոյության, անէացման դեմ պայքար է, պայքար մարդուն և մարդկայինին սպառնացող տեխնոլոգիական, էկոլոգիական և հնարավոր այլ աղետների դեմ:

Արտաքին աշխարհի նկատմամբ (և՛ բնական, և՛ սոցիալական) հսկայական իշխանության հասնելով՝ մարդն ինքն իր նկատմամբ նույնպիսի իշխանության դեռևս չի հասել: Ավելին, ինքն իրեն տիրապետելը դառնում է ավելի խնդրահարույց: Զարմանալի չէ, որ այսօր այնքան շատ են մարդուն դեպի անորոշ ապագա տանող, նրա կենսասոցիալական և էկզիստենցիալ ամբողջականությունը տրոհող տարատեսակ կործանարար ուժերը: Մտահոգիչ այս իրավիճակում կարծում ենք, որ փիլիսոփայական մարդաբանության ամենակարևոր ուղերձը պետք է լինի հետևյալը. **օգնել մարդուն մարդ մնալ**, հարազատ լինել

[24] **Էդ. Ա. Հարությունյան,** Համատեքստի հերթափոխը. վիճարկումը իբրև անհնարինի հաղթահարման կամազդակում, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2016, № 2, էջ 5-6:

թեկուզ ոչ կատարյալ, բայց սեփական բնությանն ու էությանը և ոչ թե վերածվել դրանց կենսատեխնոլոգիական նմանակը ներկայացնող խեղաթյուրված նանոնմանակին: Սա է մարդու մարդկային ապագան փրկելու ուղին: Ուստի ժամանակակից գիտության և տեխնոլոգիաների անկասելի թվացող շարունակական առաջընթացն այսուհետ պետք է իրականացվի մարդու՝ որպես անկրկնելի ցեղային տեսակի պահպանմանը նպատակամղված սոցիալական, իրավական և բարոյագիտական նոր նորմերի ստեղծմամբ, որոնց միջոցով պետք է վերահսկել, իսկ հարկ եղած դեպքում՝ սահմանափակել մարդու սրբություն սրբոց բնության մեջ անհարկի արհեստական ներխուժելու՝ սոցիոմշակութային իմաստով վտանգավոր փորձարկումներից, ըստ էության՝ փրկել **Մարդուն՝** ***մարդուց:*** Հաղթահարել մարդաբանական ճգնաժամն առանց հոգևոր բարենորոգման անհնարին է:

Մարդկությունը կանգնած է աննախադեպ և որակապես նոր գիտական ու տեխնոլոգիական թռիչքի առջև: Պետք է հուսալ, որ այդ թռիչքը կնշանավորվի ոչ թե մարդաբանական ճգնաժամի հետագա խորացմամբ, որի հետևանքով մարդը ստիպված կլինի իր տեղը զիջել գուցե գործառութային առումով ավելի կատարյալ, բայց հոգևոր առումով թերատ հետմարդուն, ինչ-որ կենսակիբեռնետիկական արարածի, այլ նոր ուղի կհարթի դեպի հոգևոր առումով անսահման ինքնակատարելագործման ընդունակ, ավանդույթի **Ոգին** գնահատող և պահպանող, ավելի ոգեղեն, ամբողջական ու ինքնաբավ մարդու համար: Մարդկությունը հայտնվել է այնպիսի իրավիճակում, երբ ընտրությունն անհրաժեշտ է, հետևանքը՝ անխուսափելի: Այսօրվա սխալը անուղղելի կարող է լինել, այսօրվա մեղքը՝ մահացու:

Բանալի բառեր – *գիտատեխնիկական առաջընթաց, մարդաբանական ճգնաժամ, տրանսհումանիզմ, մարդաբանական մոդեռնիզմ, մարդաբանական ավանդապահություն, կյանքի իմաստ, իրական հումանիզմ, մարդկային կյանք, մարդկային արժանապատվություն, ոչ բռնի վարքագիծ, հոգևոր ռեֆորմացիա*

ГАГИК СОГОМОНЯН – ***В поисках преодоления антропологического кризиса.*** – В современном обществе после глубоких ценностных и смысложизненных изменений, происходящих в результате интенсивного развития техногенной среды и самой природы человека и ведущих к исчезновению привычных социокультурных условий, возникает ситуация антропологического кризиса. В статье, критически анализирующей модернистский и традиционалистский типы его преодоления, предлагается исходить из принципа новой рациональности. При этом возникает такой тип интеграции истины и нравственности, целерационального и ценностно-рационального, куда имманентно включается рефлексия над ценностями. Предполагается, что для преодоления антропологического кризиса потребно реально гуманистическое мировоззрение, аксиологической основой которого являются жизнь человека, достоинство и ненасилие. Это триединство спасёт человечество от губительного соблазна импульсивной вседозволенности.

Ключевые слова: *научно-технический прогресс, антропологический кризис, трансгуманизм, антропологический модернизм и традиционализм, человеческая жизнь, достоинство, ненасилие, смысл жизни, духовная реформация*

GAGIK SOGHOMONYAN – ***In Search of Overcoming the Anthropological Crisis.*** – An anthropological crisis emerges in contemporary society which stems from profound changes of values and meaning of life resulting from the intensive development of technological environment and the very nature of human nature and leading to the disappearance of social-cultural conditions typical for the traditional society. On the bases of analysis of modern and traditional types of overcoming the anthropological crisis, the author suggests following a new principle of rationality that integrates the truth and the ethical, instrumental rationality and value rationality, which immanently involves reflection over values. It is assumed that the worldview of real humanism which has human life, human dignity, and nonviolence as its axiological basis, is important for overcoming the anthropological crisis. This axiological trinity will save humanity from the deadly enticement of the impulsive all-permissiveness.

Key words: *scientific and technical progress, anthropological crizis, transhumanizm, anthropological modernizm, anthropological traditionalism, the real humanism, human life, human dignity, nonviolence, meaning of life, spiritual reformation*